**Արձանագրություն N 2**

**«ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/4 ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի**

31. 07. 2017թ.
ժամ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մինասյան
Հանձնաժողովի անդամներ Ա. Գրիգորյան (ԳԱ), Ա. Այվազյան (ԳԱ),
Ա. Սաֆարյան (ԲԱ), Տ. Վարդանյան (ԳԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Կարապետյան

**1. << ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/4 >> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

---

(Վ. Մինասյան)

1.1 << **ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-17/4**>> ծածկագրով գնման ընթացակարգին առգիծ հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | |
|---|---|
| 1 | «Սասունասար» ՍՊԸ |
| 2 | «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ |

**2.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**

---

(Վ. Մինասյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկը.

| | Մասնակցի անվանումը | Առաջարկած գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | «Սասունասար» ՍՊԸ | 12480000 |
| 2 | «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ | 12750000 |

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկում չկան անճշտություններ:

**3.Բացված հայտերում՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

---

(Վ. Մինասյան)

3.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

**4.« ԵՔ-ՀԲՄԱԾՁԲ-17/4» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին**

---

(Վ. Մինասյան)

4.1 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Սասունասար» ՍՊԸ | Բավարար |
| «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**5. << ԵՔ-ՀԲՄԱԾՁԲ-17/4>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին մասին**

---

(Վ. Մինասյան)

5.1 Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով

-- 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սասունասար» ՍՊԸ –ն,

-- 2-րդ տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ -ն:

5.2 Հանձնաժողովի քարտուղարին՝ Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

## 6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

---

(Վ. Մինասյան)

6.1 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման պատասխանը ստանալու և 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | | Վ. Մինասյան |
| Անդամներ՝ | | Ա. Գրիգորյան |
| | | Ա. Այվազյան |
| | | Ա. Սաֆարյան |
| | | Տ. Վարդանյան |
| Քարտուղար՝ | | Մ. Կարապետյան |